



Նախագահի գրասենյակ

2020 թվականի ապրիլի 17

Բարի երեկո LACC ընտանիք,

Եղանակը ուշագրավ է այս վերջին երկու օրերին, և այսօր ենթադրվում է, որ նույնքան հաճելի է լինելու: Հուսով եմ, որ այսօր կկարողանաք մի պահ դուրս գալ դուրս՝ պարզապես մաքուր օդ շնչելու համար: Օհ, այո, ճանապարհին ավելի քիչ մեքենաներ լինելու հետևանքներից մեկը մաքուր օդն է:

Ահա մի քանի լավ նորություններ: Պետությունը հայտարարել է, որ նրանք ունեն ֆոնդ փաստաթուղթ չունեցող կալիֆոռնիացիների համար: Այն կորոնավիրուսային օգնության ֆոնդ է: Ես շատ մանրամասներ չունեմ: Եվ գործազրկության իրավասությունը այժմ հասանելի է նաև անկախ կապալառուների, անհատ ձեռներեցների և ինքնագրաված անձանց համար: Խնդրում ենք տեղեկացնել ձեր հարևաններին, ընտանիքին և ընկերներին այս հնարավորության մասին:


Երեքշաբթի օրը կայացած նահանգապետ Նյուգմի մամուլի ասուլիսի ժամանակ, նա ասաց, որ հարկավոր է՝ Կալիֆոռնիան ավելացնի թեստերի քանակը, պաշտպանի բարձր ռիսկի բնակիչներին վարակվելուց և ընդլայնի հիվանդանոցների տարածքները, նախքան նահանգը կկարողանա սկսել փոփոխել մեկ ամիս առաջ առաջարկված "Մնացեք տանը" հրահանգը:

Նահանգապետ Նյուգոմը կարևորեց վեց հիմնական ցուցիչներ, որոնք կուղղորդեն Կալիֆոռնիայի որոշումը, քանի որ դա է հաշվի առնում տանը մնալու հրահանգը բարձրացնելուց, ներառյալ.

1. Հնարավոր դեպքերին ուշադիր հետևելու և գտնելու ունակությունը:
2. Կանխել բարձր ռիսկային մարդկանց վարակը:
3. Պատրաստել հիվանդանոցներ՝ թվաքանակի ավելացման դեպքում վերահսկելու համար:
4. Ստեղծել թերապևտիկ միջոցներ՝ պահանջարկը բավարարելու համար:
5. Վստահ լինել, որ դպրոցները, բիզնեսները և երեխաների խնամքի հաստատությունները կարողանան ապահովվել սոցիալական հեռավորությանը միմյանց միջև:
6. Մշակել ուղեցույցներ, թե երբ պետք է խնդրել կալիֆոռնիացիներին կրկին մնալ տանն անհրաժեշտության դեպքում:

Այսպիսով, կարծես թե մեր քոլեջում հանդիպելը շուտ չի լինելու: Երեկ ես լսեցի, որ մենք չպետք է պլանավորենք մարդկանց որևէ հավաքույթ Լոս Անջելեսում գոնե մինչև ամառ(հունիս, հուլիս և օգոստոս): Երեկ ես նաև տեղեկացա մի վիճակագրության մասին, որ վերջին 250 տարվա ընթացքում եղել են 10 համաճարակներ, և բոլոր 10 համաճարակների դեպքում խոշոր բռնկում է տեղի ունեցել 6 ամիս անց այն բանից հետո, երբ պարզվել է, որ անցել է դրա ընթացքը: Մի փոքր սթափեցուցիչ տեղեկատվություն: Ջանասիրությունն ու հեռավորությունն պահպանելը օրվա կարգադրություններն են:

ՇԱՏ ԿԱՐԵՎՈՐ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ- Եթե դիմել եք Chromebook- ի (նոութբուքի) կամ Kroger Food for Less նվեր քարտի համար ուսանողական պորտալով, ինդրում ենք ստուգել ձեր ուսանողական էլ. փոստը: Դուք էլփոստով ծանուցում կստանաք՝ ձեզ հասանելի մրցանակն ընդունելու համար: Դուք պետք է պաշտոնապես ընդունեք մրցանակը և շնորհակալական նամակ գրեք, որպեսզի նոթբուքը կամ նվեր քարտը ուղարկվի ձեր տուն: Ահա այն էլեկտրոնային հաղորդագրության նմուշը, որ դուք ստանալու եք՝



Նաև գիտեմ, որ մեր ավարտականի վիրտուալ հանդիսության մասին մի քանի հարցեր են եղել: 2020-ի ավարտական դասը նշելու համար LACCD-ին անց է կացնելու ավարտական վիրտուալ հանդիսություն առցանց: Ինչպես նշել եմ նախկինում, մենք պատրաստվում ենք պահպանել մեր ամրագրումը Հունական թատրոնի հետ այնքան ժամանակ, որքան հնարավոր է, բայց մենք պետք է իրատես լինենք մեր պլանավորման հետ կապված, թե ինչպես համաճարակ կզարգանա: Խնդրում ենք ձեզ մոտ նշել ամսաթիվը, որպեսզի դիտեք մեր վիրտուալ ավարտական արարողությունը հունիսի 9-ին: Ես շատ շուտով ձեզ համար շատ ավելի տեղեկություններ կունենամ:

Ակադեմիական գործերի բաժնի անունից

NetTutor-ն առաջարկում է անվճար առցանց ուսուցում LACCD- ի ուսանողների համար 37 տարբեր ոլորտներում՝ ներառյալ Հաշվապահություն, Քիմիա, Պատմություն, Մաթեմատիկա, Քաղաքագիտություն, գրավոր և այլն:

Ահա, թե ինչպես ուսանողները կարող են օգտվել այս դասավանդումից.

1. Մուտք գործեք ձեր ուսանողական պորտալ
2. Սեղմեք "Առցանց ուսուցում"(Online Tutoring) կոճակը ուսանողական էջում
3. Գրանցվեք LACCD առցանց ուսուցմանը
4. Սեղմեք "Գնացեք դասընթացի"(Go to the Course) կոճակը
5. Սեղմեք ձախ կողմում գտնվող NetTutor կոճակը՝ տեսնելու այն առարկաների ցանկը, որոնց համար առկա են դասավանդումներ:

Սա ի լրումն մեր LACC-ի դասավանդման աջակցության ծառայությունների է, որոնք հասանելի են առցանց/հեռակա կարգով՝ Անգլերենով գրելու կենտրոն, Math Pi Shop, Writers Block և այլ բաժնիների հատուկ դասավանդման ծառայություններ:

Երկուշաբթի՝ ապրիլի 20-ին, ամառային դասերի դասացուցակը կտեղադրվի առցանց: Մինչև մայիսի 1-ը դուք էլեկտրոնային հազորդագրություն կստանաք գրանցման ժամադրության հետ մեկտեղ:

Ուսանողների համար կարևոր ամսաթվերը

Ապրիլի 22-ին՝ ֆինանսական օգնության երկրորդ հատկացում

Մայիսի 4-ին - սկսվում է ամառային դասերի գրանցումը

Մայիսի 10-ը՝ վերջին օրը՝ դիմում խնդրագիր ներկայացնելու Pass/No Pass- համար

Մայիսի 10-ը - վերջին օրը՝ EW-ով(Emergency Withdrawal) դասերը դադարեցնելու համար:

Եթե դուք չեք կարողացել կապնվել ձեր դասախոսների հետ կամ դասի հաճախել, հնարավոր է, որ մոտ ապագայում բացառվեք դասից: Եթե ձեր դասախոսի հետ կապնվելու համար օգնության կարիք ունեք, հաղորդագրություն ուղարկեք hotline-students@lacitycollege.edu էլեկտրոնային հասցեով, և մեր welcome center-ի աշխատակիցները կօգնեն ձեզ կապնվելու հարցում:

Ուսանողական ծառայություններ բաժնի անունից

Ուսանողները կկարողանան ստանալ ֆինանսական աջակցություն Պել Գրանտ Ամառ 2020 սեմեստրի համար, եթե նրանք որակավորվում են դրա համար: Պել Գրանտի վերաբերյալ

լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ֆինանսական օգնության բաժնին Ֆայնենշլ Էյդին Cranium Café- ի միջոցով: Cranium Café-ի համար կարող եք գրանցվել Canvas-ում: Եթե Ձեզ անհրաժեշտ է օգնություն ` Canvas-ով կամ Cranium Café-ով շրջագայելու համար, գրեք մեզ hotline-students@lacitycollege.edu էլ. հասցեով, և մեր աուտոիչի անձնակազմը կօգնի ձեզ:

Մենք ձեզ համար նոր բան ունենք, որն երեկվանից է սկսվել: Այն կոչվում է «Ինչ կա ձեր մտքում», և այն անցկացվում է ամեն չորեքշաբթի երեկոյան 12: 30-ից մինչև 13:30-ը: Մա կօգնի ձեզ թեթևացնել COVID-19-ի պատճառով փոփոխությունների արդյունքում ձեռք բերած լարվածությունը: Այս ֆորումը վարելու են մեր "Քոլիջիան" թերթերի խմբագիր Անդե Ռիչարդսը և մեր Լայֆ Սկիլզ ծրագրի համակարգող Ջոու Էկնոփսկին: Բոլորը կմնաք անանուն և կարող եք մուտք գործել միայն ձեր անունով կամ մականունով: Այս ֆորումներն արձանագրվելու և արխիվացվելու են LACC կայքում ` ուսանողներին հասանելի լինելու համար: Միացեք Zoom-ին ` հանդիպման ID: 506 692 050

Նաև "Ուսանողական կյանքի գրասենյակը" (Office of Student Life) դեռ դիմումներ է ընդունում առաջիկա 2020-2021թթ.-ի Ուսանողական կառավարական(ASG) ընտրությունների համար: Հայտին դիմելու վերջնաժամկետն է `2020 թվականի ապրիլի 20-ը, ժամը 16: 00-ը: Եթե դուք հետաքրքրված եք առաջադրվելու համար, խնդրում ենք հաղորդագրություն ուղարկել Արմինե Դերեղիշյանին deregha@laccd.edu էլ. հասցեով ` դիմումի և լրացուցիչ տեղեկությունների համար: Ուսանողների Կառավարության ընտրությունները տեղի կունենան առցանց: Քվեարկության ժամկետը կբացվի երկուշաբթի, մայիսի 11-ին, և կավարտվի ուրբաթ օրը `մայիսի 15-ին: Կարող եք լսել, թե ինչպես են բոլոր թեկնածուները կենդանի խոսում թեկնածուների ֆորումում, որը տեղի կունենա առցանց մայիսի 4-ին: Ես այդ մասին ավելի շատ տեղեկություններ կուղարկեմ ձեզ շատ շուտով:

Քանի որ մեր շաբաթը շարունակվում է, և ամեն օր տարբեր լուրեր են տարածվում այն մասին, որ վերադարձանք սոցիալական հավաքույթներին, ինչպես նաև այն իրականության հետ, որ դրանք, հավանաբար, ամիսներ են տևելու, պարզապես հիշեք, որ սա ժամանակավոր է: Մենք կրկին միասին ենք լինելու:

ՀԱՎԱՏԱ ՆՎԱՃԻՐ ՀԱԶՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՍԻՐ
Համբերատար եղեք:

Ուժեղ մնացեք: Միավորված եղեք:

Լավ և ապահով եղեք:

Մերի

Please visit the [LACC website](#) to view this message in Armenian, Korean, Russian, or Spanish.

Խնդրում ենք այցելել [LACC](#) կայք՝ այս հաղորդագրությունը հայերեն, կորեերեն, ռուսերեն կամ իսպաներեն լեզուներով կարդալու համար

Посетите LACC [website](#) , чтобы просмотреть это сообщение на Армянском, Корейском, Русском или Испанском языках.

Para ver este mensaje en español, favor de visitar el sitio web de [LACC](#)